ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք,
Լ. Նավասարդյան 19/1, Հեռ. 095 702854 ,
armavir.shahumyan@mta.gov.am

N 38
11 մայիս 2017թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարո՛ն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Համբարձումյան
095 14-30-60

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.74/7626-17
«25» 05 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 10-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը և Վահան Վարտանի Այդինյանի 2017 թվականի ապրիլի 18-ի դիմումը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող Վահան Վարտանի Այդինյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-077-008-028/ տնամերձ հողամասին և նրա վրա առկա բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գ. Շահումյան Ի.Հարությունյան փող., թիվ 50 տուն:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 17 թ. ապրիլի 18
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2017թվականի N 11-Ա

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N64-Ն որոշման 6-րդ կետը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերի նախահաշվի՝

1) 01 բաժին 6 խումբ 1 դաս /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ ծրագրի 4237 /ներկայացուցչական ծախսեր/ հոդվածի հուլիս ամսվա ժամանակացույցով նախատեսված 925000 /ինը հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամը տեղափոխել ապրիլ ամիս,

2) 01 բաժին 1 խումբ 1 դաս /օրենսդիր գործադիր / ծրագրի 4111 /աշխատողների աշխատավարձեր/ հոդվածի դեկտեմբեր ամսվա ժամանակացույցով նախատեսված 16250000 / տասնվեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը տեղափոխել ապրիլ ամիս,

3) 01 բաժին 1 խումբ 1 դաս/օրենսդիր գործադիր/ ծրագրի 4112/պարգևատրում/ հոդվածի դեկտեմբեր ամսվա ժամանակացույցով նախատեսված 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը տեղափոխել ապրիլ ամիս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 17 թ. ապրիլի 18
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 12-Ա

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թվականի մարտի 20-ի N 24-Ա որոշումը, Շահումյան համայնքի փողոցների հարթեցման և խճաքարի փռման աշխատանքները իրականացնելու նպատակով, ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագա համայնքի բնակիչ Միհրան Լյովայի Խաչատրյանի հետ կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր 8 օր ժամկետով՝ համաձայն հավելվածի:

2.Ծառայությունների վճարումն իրականացնել միանվագ վճարման տեսքով՝ 320000/երեք հարյուր քսան հազար/Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2017 թ. ապրիլի 18
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 ապրիլի 2017թվականի N 14-Ա

ՎԱՐԱԶԴԱՏ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 12-ի N03-Ա կարգադրությունը, կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող մշակույթի տան տնօրեն Վարազդատ Վանուշի Համբարձումյանին տրամադրել 2017 թվականի ամենամյա արձակուրդ, 2017 թվականի ապրիլի 5-ից մինչև մայիսի 11-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 նվազագույն և 4 լրացուցիչ/:

2.Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի մայիսի 12-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Պ Ա.Լ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 17թ. ապրիլի 3
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

05 ապրիլի 2017թվականի N 15-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20-ի N 22-Ա որոշումը <<Մայրության և գեղեցկության>> տոնի կապակցությամբ սահմանված կարգով միջոցառում կազմակերպելու և ձեռք բերված նվերները, ծաղիկներն ու ծաղկեփնջերը տրամադրելու համար, ***կարգադրում եմ՝***

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին /Գ.Համբարձումյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել ապրիլի 7-ին և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Ա.Լ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 17թ ապրիլի 5
գ.Շահումյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան
համայնքի ղեկավարի
2017 թվականի ապրիլի 5-ի
թիվ 15-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

1. Հանձնաժողովի նախագահ՝

   Գ.Համբարձումյան /համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/

2. Հանձնաժողովի անդամներ՝

   1) Ա.Գրիգորյան /համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/

   2) Զ.Մանուկյան /համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ/

   3) Ռ.Հախումյան /համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ/

Աշխատակազմի քարտուղար Գ. Մ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 ապրիլի 2017թվականի N 16-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, համայնքում փողոցների հարթեցման և խճաքարերի փռման աշխատանքների կատարման նպատակով, **կարգադրում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին /Ա.Գրիգորյան/՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքում կատարված փողոցների և ճանապարհների ընթացիկ վերանոգման աշխատանքները և կազմել ավարտական ակտ:

3.Հանձնաժողովին /Ա.Գրիգորյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկօրյա ժամկետում և զեկուցել համայնքի ղեկավարին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 17թ. ապրիլի 25
գ.Շահումյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան
համայնքի ղեկավարի
2017 թվականի ապրիլի 25-ի
թիվ 16-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան /համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/

2. Հանձնաժողովի անդամներ՝

1) Զ.Մանուկյան /համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ/

2) Ռ. Հախումյան /համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ/

3) Վ.Համբարձումյան /մշակույթի տան տնօրեն/

Աշխատակազմի քարտուղար Գ. Մ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 ապրիլի 2017թվականի N 17-Ա

ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի <<է>> կետով, *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի աշխատակազմի քարտուղար Գոհար Համբարձումյանին 2017 թվականի ապրիլի 28-ին գործուղել Արմավիրի մարզպետարան՝ ՏԻՄ և իրավաբանական բաժին:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին /Ս.Հակոբյան/՝ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 17թ. ապրիլի 28
գ.Շահումյան